Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-1128[1]-22.07.2025-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1.** «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 12-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«12) **մանկավարժական աշխատող՝** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության ստեղծման և իրագործման պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մասնագիտացված կրթական, մանկավարժահոգեբանական ծառայություն իրականացնող կառույցի աշխատակից.».

***Հոդված* 2.** 7-րդ հոդվածի՝

1. 6.1.-ին մասի 2-րդ պարբերության «բացառապես» բառը փոխարինել «պետական եւ» բառերով:

2. 10-րդ մասում՝

1) 8-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել նոր՝ 9)-րդ ենթակետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«9) միջազգային ծրագրերի իրականացումը:».

Հոդված 3. 9-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սովորողների անվճար հանրակրթությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հիմնադրում է ուսումնական հաստատություններ պետական ոչ առեւտրային կազմակերպության կամ հիմնադրամի կազմակերպական-իրավական ձեւով (այսուհետ նաև՝ պետական ուսումնական հաստատություն)»:

2. 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը հանդիսանում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ մասնագիտացված ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների, հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների լիազոր մարմինը:»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պետական ուսումնական հաստատության տնօրենին նշանակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան:»:

2. 12-րդ մասից հանել «համապատասխան» բառը:

3. 15-րդ մասում «ուսումնական հաստատության տնօրենը» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր տարի հաստատության խորհրդին է ներկայացնում զարգացման ծրագրի կատարողականը,» բառերը:

4. 20-րդ մասի 22-րդ կետում «փաստաթղթերի» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային» բառը:

5. 21-րդ մասում «16-րդ մասով» բառերը փոխարինել «20-րդ մասով» բառերով:

6. 22-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 22.1.-ին մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«22.1. Պետական ուսումնական հաստատության համակարգողին (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) Հայաստանի Հանրապետության մարզերում նշանակում է համապատասխան մարզպետը, իսկ Երեւանում՝ Երեւանի

քաղաքապետը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ կազմված հանձնաժողովի որոշման արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան:»:

7. 24-րդ մասում «19-րդ մասով» բառերը փոխարինել «23-րդ մասով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 5-րդ հոդվածում Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝

ա. 1) կետում «տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և» բառերից հետո լրացնել «(տվյալ առարկայի ոլորտի 80 և ավելի կրեդիտ, ինչպես նաև)» բառերը.

բ. 1)-ին կետը լրացնել նոր՝ 1.1) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) տվյալ առարկայի հարակից մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող (տվյալ առարկայի ոլորտի 40-79 կրեդիտ) և կամավոր ատեստավորված անձը՝ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքելու դեպքում.»:

2. 7-րդ մասի սկիզբը լրացնել նոր նախադասությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«Հերթական ատեստավորմանը չներկայանալու կամ չատեստավորվելու դեպքում ուսուցիչը մասնակցում է կազմակերպվող հաջորդ հերթական ատեստավորմանը, որին կրկին չներկայանալու կամ կրկին չատեստավորվելու դեպքում ուսուցիչը համարվում է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող:».

3. 15-րդ մասում «ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին օրենսդրությամբ սահմանված դրական արդյունքի դեպքում կարող է դիմել կամավոր ատեստավորման» բառերը փոխարինել «ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել միայն կամավոր ատեստավորման դրական արդյունք ունենալու դեպքում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4)-րդ կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«4) հիմնադրում, վերակազմակերպում է ուսումնական հաստատությունները.».

2) 6.1)-ին կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«6.1) հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի պատվիրակման կարգը.»:

Հոդված 7. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 2-րդ կետից հանել «արտակարգ ընդունակություններ դրսեւորած երեխաների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների եւ» բառերը.

2. 5)-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) մշակում է ոլորտի քաղաքականությունը, պետական ուսումնական հաստատություններում ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը՝ օրենսդրության եւ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:».

3. 5-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5.1)-ին, 5.2)-րդ, 5.3)-րդ, 5.4)-րդ եւ 5.5)-րդ կետերով.

«5.1) Կրթական ծրագրերի իրականացման համար օժանդակում է ապահով միջավայրի ստեղծմանը.

5.2) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, ազատում է պետական ուսումնական հաստատության տնօրենին: Նրա հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.

5.3) կազմակերպում եւ անցկացնում է պետական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորումը.

5.4) համակարգում է ուսուցիչների մասնագիտական զարգացման՝ օրենսդրությամբ սահմանված ծրագրերի իրականացումը.

5.5) համակարգում է պետական ուսումնական հաստատություններում սովորողների եւ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը.»:

4. Ուժը կորցրած ճանաչել 6.1)-ին կետը.

5. 7)-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման չափանիշները.»:

Հոդված 8. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1)-ին, 1.2)-րդ, 1.3)-րդ և 1.4)-րդ կետերով՝

«1.1) իրականացնում է պետական ուսումնական հաստատություններում վարչատնտեսական գործառույթների համակարգում (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների).

1.2) իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակված ծառայությունների իրականացման մշտադիտարկում (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների.).

1.3) ըստ անհրաժեշտության հավաքագրում, ամփոփում եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին է ներկայացնում ուսումնական հաստատություններն վերաբերերող տեղեկատվությունը, ինչպես նաեւ հաստատում է ուսումնական հաստատությունների կողմից Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրված տվյալները.

1.4) իրականացնում է ոլորտի ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունման, ամփոփման աշխատանքներ եւ ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմնին.»:

2. 2)-րդ եւ 3)-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) աջակցում է ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կատարմանը.

3) մասնակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաեւ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման եւ հանրակրթության մեջ ներգրավման աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի եւ շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ».

4. 4-րդ կետում «պահպանումը» բառից հետո լրացնել «, իրականացնում է գույքի ընդունման եւ հանձնման գործառույթներ» բառերը.

5. 5)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է տվյալ պետական ուսումնական հաստատության համակարգողին և նրա հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է համակարգողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.»:

6. 6)-րդ կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«6) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների եւ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացին.»:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետից հետո լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 1.1)-ին կետով.

«1.1) աջակցում է կրթահամալիրների՝ որպես համայնքային կենտրոնների գործունեության զարգացմանը.».

2. 2)-րդ մասը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«2) աջակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած եւ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման, ինչպես նաեւ համայնքում գործող խնամակալության եւ հոգաբարձության մարմին ուղղորդված երեխային հանրակրթության մեջ ներգրավելու աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի եւ շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ.»:

Հոդված 10. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով՝ հետեյալ բովանդակությամբ.

«9. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանակոչության գործընթացը կարող է իրականացվել 29-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:»:

***Հոդված* 11.** Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխության, 4-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերով, 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2)-րդ կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1.1)-ին, 1.2)-րդ կետերով եւ 5-րդ մասով նախատեսված լիազորությունների իրականացման սկիզբ է սահմանվում 2026 թվականի սեպտեմբերի 1-ը, իսկ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխության դեպքում նախատեսված լիազորությունների իրականացման սկիզբ է համարվում 2027 թվականի սեպտեմբերի 1-ը: Սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվում՝ մարզպետարանների աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հոդված 11. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասներկուամսյա ժամկետում:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-1128[1]-22.07.2025-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1.** «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 12-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«12) **մանկավարժական աշխատող՝** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության ստեղծման և իրագործման պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մասնագիտացված կրթական, մանկավարժահոգեբանական ծառայություն իրականացնող կառույցի աշխատակից.».

***Հոդված* 2~~1~~.** ~~«Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)~~ 7-րդ հոդվածի՝

1. 6.1.-ին մասի 2-րդ պարբերության «բացառապես» բառը փոխարինել «պետական եւ» բառերով:

2. 10-րդ մասում՝

1) 8-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել նոր՝ 9)-րդ ենթակետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«9) միջազգային ծրագրերի իրականացումը:».

***Հոդված* 3~~2~~.** 9-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սովորողների անվճար հանրակրթությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հիմնադրում է ուսումնական հաստատություններ պետական ոչ առեւտրային կազմակերպության կամ հիմնադրամի կազմակերպական-իրավական ձեւով (այսուհետ նաև՝ պետական ուսումնական հաստատություն)»:

2. 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը հանդիսանում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ մասնագիտացված ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների, հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների լիազոր մարմինը:»:

Հոդված 43. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պետական ուսումնական հաստատության տնօրենին նշանակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան:»:

2. 12-րդ մասից հանել «համապատասխան» բառը:

3. 15-րդ մասում «ուսումնական հաստատության տնօրենը» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր տարի հաստատության խորհրդին է ներկայացնում զարգացման ծրագրի կատարողականը,» բառերը:

4. 20-րդ մասի 22-րդ կետում «փաստաթղթերի» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային» բառը:

5. 21-րդ մասում «16-րդ մասով» բառերը փոխարինել «20-րդ մասով» բառերով:

6. 22-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 22.1.-ին մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«22.1 Պետական ուսումնական հաստատության համակարգողին (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) Հայաստանի Հանրապետության մարզերում նշանակում է համապատասխան մարզպետը, իսկ Երեւանում՝ Երեւանի

քաղաքապետը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ կազմված հանձնաժողովի որոշման արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան:»:

7. 24-րդ մասում «19-րդ մասով» բառերը փոխարինել «23-րդ մասով» բառերով:

Հոդված 5~~4~~. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 5-րդ հոդվածում Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝

ա. 1) կետում «տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և» բառերից հետո լրացնել «(տվյալ առարկայի ոլորտի 80 և ավելի կրեդիտ, ինչպես նաև)» բառերը.

բ. 1)-ին կետը լրացնել նոր՝ 1.1) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) տվյալ առարկայի հարակից մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող (տվյալ առարկայի ոլորտի 40-79 կրեդիտ) և կամավոր ատեստավորված անձը՝ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքելու դեպքում.»:

2. 7-րդ մասի սկիզբը լրացնել նոր նախադասությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«Հերթական ատեստավորմանը չներկայանալու կամ չատեստավորվելու դեպքում ուսուցիչը մասնակցում է կազմակերպվող հաջորդ հերթական ատեստավորմանը, որին կրկին չներկայանալու կամ կրկին չատեստավորվելու դեպքում ուսուցիչը համարվում է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող:».

~~2.~~ 3. 15-րդ մասում «ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին օրենսդրությամբ սահմանված դրական արդյունքի դեպքում կարող է դիմել կամավոր ատեստավորման» բառերը փոխարինել «ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել միայն կամավոր ատեստավորման դրական արդյունք ունենալու դեպքում» բառերով:

Հոդված 6~~5~~. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4)-րդ կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«4) հիմնադրում, վերակազմակերպում է ուսումնական հաստատությունները».

2) 6.1)-ին~~րդ~~ կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«6.1) հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի պատվիրակման կարգը.»:

Հոդված 76. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 2-րդ կետից հանել «արտակարգ ընդունակություններ դրսեւորած երեխաների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների եւ» բառերը.

2. 5)-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) մշակում է ոլորտի քաղաքականությունը, պետական ուսումնական հաստատություններում ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը՝ օրենսդրության եւ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:».

3. 5-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5.1)-ին, 5.2)-րդ, 5.3)-րդ, 5.4)-րդ եւ 5.5)-րդ կետերով.

«5.1)- Կրթական ծրագրերի իրականացման համար օժանդակում է ապահով միջավայրի ստեղծմանը.

5.2)- օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, ազատում է պետական ուսումնական հաստատության տնօրենին: Նրա հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.

5.3)- կազմակերպում եւ անցկացնում է պետական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորումը.

5.4)- համակարգում է ուսուցիչների մասնագիտական զարգացման՝ օրենսդրությամբ սահմանված ծրագրերի իրականացումը.

5.5)- համակարգում է պետական ուսումնական հաստատություններում սովորողների եւ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը.»:

4. Ուժը կորցրած ճանաչել 6.1)-ին կետը.

5. 7)-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման չափանիշները.»:

Հոդված 8~~7~~. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1)-ին, 1.2)-րդ, 1.3)-րդ եւ 1.4)-րդ կետերով՝ ~~։~~

«1.1) իրականացնում է պետական ուսումնական հաստատություններում վարչատնտեսական գործառույթների համակարգում (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների~~։~~).

1.2) իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակված ծառայությունների իրականացման մշտադիտարկում (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների.).

1.3) ըստ անհրաժեշտության հավաքագրում, ամփոփում եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին է ներկայացնում ուսումնական հաստատություններն վերաբերերող տեղեկատվությունը, ինչպես նաեւ հաստատում է ուսումնական հաստատությունների կողմից Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրված տվյալները.

1.4) իրականացնում է ոլորտի ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունման, ամփոփման աշխատանքներ եւ ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմնին.»:

2. 2)-րդ եւ 3)-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) աջակցում է ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կատարմանը.

3) մասնակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաեւ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման եւ հանրակրթության մեջ ներգրավման աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի եւ շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ».

4. 4-րդ կետում «պահպանումը» բառից հետո լրացնել «, իրականացնում է գույքի ընդունման եւ հանձնման գործառույթներ» բառերը.

5. 5)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է տվյալ պետական ուսումնական հաստատության համակարգողին և նրա հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է համակարգողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.»:

~~5-րդ կետից հանել «իր լիազորության տակ գտնվող», «տնօրենին եւ» եւ «տնօրենի եւ» բառերը, իսկ «նրանց» բառը փոխարինել «նրա» բառով.~~

6. 6)-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների եւ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացին.»:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1)-ին կետով.

«1.1) աջակցում է կրթահամալիրների՝ որպես համայնքային կենտրոնների գործունեության զարգացմանը.».

2. 2)-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) աջակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած եւ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման, ինչպես նաեւ համայնքում գործող խնամակալության եւ հոգաբարձության մարմին ուղղորդված երեխային հանրակրթության մեջ ներգրավելու աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի եւ շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ.»:

Հոդված 10. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«9. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանակոչության գործընթացը կարող է իրականացվել 29-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:»:

Հոդված 11 10 9. Սույն օՕրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխության, 43-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերով, 87-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2-րդ կետով, 98-րդ հոդվածի 1-ին մասի 1.1)-ին, 1.2)-րդ կետերով եւ 5-րդ մասով նախատեսված լիազորությունների իրականացման սկիզբ է սահմանվում 2026 թվականի սեպտեմբերի 1-ը, իսկ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխության դեպքում նախատեսված լիազորությունների իրականացման սկիզբ է համարվում 2027 թվականի սեպտեմբերի 1-ը: Սույն օՕրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվում՝ մարզպետարանների աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հոդված 110. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասներկուամսյա ժամկետում:

Հոդված 121. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (*Կ-1128-22.07.2025-ԳԿ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	**Օրենքի նախագիծ**	Առաջարկվում է օրենքի նախագծի համարակալումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին, որոնց համաձայն՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	**2-րդ հոդված**	2-րդ հոդվածով ՝ օրենքի 38-րդ հոդվածի նոր «1.1)»-րդ կետում «ուսումնական հաստատություններում» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «պետական հանրակրթական» բառերը՝ հաշվի առնելով, որ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները, ելնելով իրենց	Ընդունվել է	Ընդունվել է

			կազմակերպաիրավական ձևից, ունեն վարչատնտեսական գործառույթների համակարգման այլ ընթացակարգեր:		
3.	Կառավարություն	**4-րդ հոդված**	Առաջարկում ենք վերանայել «սույն Օրենք» ձևակերպումը, քանի որ Նախագծի 1-ին հոդվածից արդեն իսկ պարզ է, որ «Օրենք» ասելիս նկատի է առնվում «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքը, այլ ոչ թե Նախագիծը:	Ընդունվել է	
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	Օրենքի նախագիծ	Առաջարկվում է օրենքի նախագծի ամբողջ տեքստում համարակալումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին, որոնց համաձայն՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	Հոդված 1	Առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդված՝ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը շարադրելով հետեւյալ բովանդակությամբ. «12) **մանկավարժական աշխատող՝** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության ստեղծման և իրագործման պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մասնագիտացված կրթական, մանկավարժահոգեբանական ծառայություն իրականացնող կառույցի աշխատակից.»՝ Լրացումը կատարվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագիտացված մանկավարժահոգեբանական ծառայություն	Ընդունվել է	Ընդունվել է

			իրականացնող կառույցի աշխատակիցը նույնպես համարվում է մանկավարժական աշխատակից: Հաշվի առնելով վերոգրյալը հոդվածների համարակալումը վերանայվել է:		
3.	Կառավարություն	Հոդված 2 (լրամշակված 3-րդ)	«(այսուհետ» բառից հետո լրացնել «նաև» բառը: Առաջարկվում է կիրառել (այսուհետ նաև՝ պետական ուսումնական հաստատություն) հապավումը՝ հաշվի առնելով, որ «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ և 35-րդ հոդվածներում կիրառվում են «պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» սահմանումը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Հոդված 3 (լրամշակված 4-րդ)	Առաջարկվում է 6-րդ կետում՝ «Պետական ուսումնական հաստատության համակարգողին» բառերից հետո լրացնել (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների եւ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) բառերը՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով, որոնց համաձայն՝ *«Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները»:* Վերոգրյալի համար հիմք է հանդիսացել Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1.1) ենթակետով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացվող նոր՝ 1.1-րդ կետը, որի համաձայն՝ Մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) իրականացնում է պետական ուսումնական հաստատություններում վարչատնտեսական գործառույթների համակարգում (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների), իսկ Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասով Օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասից հետո լրացվող նոր՝ 22.1-ին մասի համաձայն՝ Պետական ուսումնական	Ընդունվել է	Ընդունվել է

			հաստատության համակարգողին Հայաստանի Հանրապետության մարզերում նշանակում է համապատասխան մարզպետը, իսկ Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ կազմված հանձնաժողովի որոշման արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան» ձևակերպումները:		
5.	Կառավարություն	Հոդված 6 (լրամշակված 7-րդ)	«5.3» կետում «անցկացնում է» բառից հետո լրացնել «պետական» բառը՝ հաշվի առնելով 3-րդ հոդված մաս 1-ին մասով կատարված խմբագրումը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	Հոդված 7 (լրամշակված 8-րդ)	1.1)» կետում «իրականացնում է» բառից հետո լրացնել «պետական» բառը՝ հաշվի առնելով նախագծի 3-րդ հոդվածի մաս 1-ին մասով կատարված խմբագրումը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	Հոդված 7 (լրամշակված 8-րդ)	Առաջարկվում է 5-րդ կետը՝ «5-րդ կետից հանել «իր լիազորության տակ գտնվող», «տնօրենին եւ» եւ «տնօրենի եւ» բառերը, իսկ «նրանց» բառը փոխարինել «նրա» բառով.» բառերի փոխարեն շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է պետական ուսումնական հաստատության համակարգողին և նրա հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է համակարգողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.»՝ հաշվի առնելով իրավական առումով ընթեռնելի լինելը:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	Հոդված 9 (լրամշակված 10-րդ)	1. «2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով, 2. «3-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով» բառերը՝ «4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով» բառերով,	Ընդունվել է	Ընդունվել է

			3. «7-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2-րդ կետով» բառերը փոխարինել «8-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2-րդ կետով», 4. «8-րդ հոդվածի 1-րդ մասի» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 1-րդ մասի» բառերով: 5. Առաջարկվում է վերանայել նաև «սույն Օրենք» ձևակերպումը, քանի որ Նախագծի 1-ին հոդվածից պարզ է դառնում, որ «Օրենք» ասելիս նկատի է առնվում «Հանրակրթության մասին» օրենքը, այլ ոչ թե Նախագիծը:		
«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	Հոդված 1	1. Առաջարկում ենք ««Տարածքային կառավարման մասին» 2019 թվականի նոյեմբերի 14-ի ՀՕ-252-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ՝ բառերից հետո հանել «Մարզպետի լիազորությունները կրթության բնագավառում» հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝» բառերը՝ հաշվի առնելով 1-ին կետում կրկնվող միտքը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետում՝ «իրականացնում է» բառից հետո լրացնել «պետական» բառը՝ հաշվի առնելով, որ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները, ելնելով իրենց կազմակերպաիրավական ձևից, ունեն վարչատնտեսական գործառույթների համակարգման այլ ընթացակարգեր:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Հոդված 2	Անհրաժեշտ է վերանայել նաև «սույն Օրենք» ձևակերպումը, քանի որ Նախագծի 1-ին հոդվածից պարզ է դառնում, որ «Օրենք» ասելիս նկատի է առնվում «Տարածքային կառավարման մասին» 2019 թվականի նոյեմբերի 14-ի ՀՕ-252-Ն օրենքը, այլ ոչ թե Նախագիծը:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

1.	Կառավարություն	Հոդված 1	1. Առաջարկվում է «մասերով» բառը փոխարինել «կետերով» բառով, 2. Առաջարկվում է 2-րդ կետը՝ «2) Համայնքի ղեկավարն աջակցում է կրթահամալիրների՝ որպես համայնքային զարգացման կենտրոնների գործունեությանը:» նախադասությունը փոխարինել «2) համայնքի ղեկավարն աջակցում է կրթահամալիրների՝ որպես համայնքային կենտրոնների գործունեության զարգացմանը.» նախադասությամբ՝ հաշվի առնելով նախագծի ողջ տեքստի տրամաբանությունը: 3. 3-րդ կետում «Համայնքի» բառը գրել փոքրատառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2025 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԱԺ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ««ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ԱԺ պատգամավոր Նարեկ Բաբայան	Հոդված 5	Առաջարկվում է Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ա. 1) կետում «տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և» բառերից հետո լրացնել «(տվյալ առարկայի ոլորտի 80 և ավելի կրեդիտ, ինչպես նաև)» բառերը. բ. 1)-ին կետը լրացնել նոր՝ 1.1) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1) տվյալ առարկայի հարակից մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող (տվյալ առարկայի ոլորտի 40-79 կրեդիտ) և կամավոր ատեստավորված անձը՝ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքելու դեպքում.»:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	ԱԺ պատգամավոր Նարեկ Բաբայան	9-րդ հոդվածից հետո լրացնել նոր հոդված	Առաջարկվում է Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ. «9. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանակոչության գործընթացը կարող է իրականացվել 29-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:»:	Ընդունվել է	Ընդունվել է